

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(գերմաներենի նյութի հիման վրա)

Եղանակավորող բառերը գերմաներենում հետազոտության առումով երկար ժամանակ խորթ վերաբերմունքի էին արժանանում: Նրանք դիտվում էին անցանկալի, «անկարևոր» և նկարագրվում էին որպես «կարկատան բառեր» (Flickwörter), բառ-համեմունքներ (Wärzwörter), լրացնող բառեր (Fuellwörter):

Պատճառաբանվում էր, որ չկան տեսական և մեթոդական բավարար միջոցներ այդ բառերը նկարագրելու և ուսումնասիրելու համար¹:

Եղանակավորող բառերը նկարագրվում էին նախադասությունից դուրս, այդպիսով գործնականում համարվելով երկրորդական:

Միայն սկած 60-ական թվականներից սկսեցին զբաղվել եղանակավորող բառերով և նրանց արժևորմամբ: Այս անգամ արդեն «իմաստագուրկ», անկարևոր լինելուց նրանք վերաարժևորվեցին որպես բազմիմաստ բառեր:

Եղանակավորող բառերը կարելի է դասակարգել, բնութագրել ըստ նախադասության մեջ ունեցած նրանց դերի և նախադասությունից դուրս նրանց նշանակության: Եղանակավորող բառերի հատկանիշների մեջ աչքի զարնող առանձնահատկությունն այն է, որ նույնիսկ նրանց դուրս մղման դեպքում նախադասության ընդհանուր իմաստը չի խաթարվում:

Վերջին իրողության հաշվառումով անհրաժեշտ է հիշյալ բառերի գործառույթը որոշել այդ տեսանկյունից: Հ.Վայդթն, օրինակ, նրանց մեջ ազդանշան է տեսնում խոսողի նախադրույթի նկատմամբ ունեցած դիրքորոշման համար, այսինքն նրանց ներհատուկ է անդդիադրողակցական գործառույթ: Այսպես օրինակ նրանք ունեն խոսողական-կատարողական հատկություն, հանդես են գալիս պատմողական (Deutsch ist *ja* eine schwere Sprache), հարցական (Was ist *denn* passiert?) և հրամայական (Du machst jetzt *aber* Schluss!) նախադասություններում, արտահայտում են խոսողի մտադրությունը: Նրանք վերաբերում են ոչ թե նախադասության առանձին անդամներին, այլ ստորոգյա-

¹ Öhlschläger, G.: Untersuchungen zu den Modalpartikeln des Deutschen. Berlin, New York, 1985. 350.

լին, որով և ամբողջ նախադասությամբ: Ավելանում է նաև այն համագամանքը, որ նրանց նշանակությունը չի կարելի դիտել առանց խոսքային այն իրադրության, որում նրանք գտնվում են: Նրանք նշում կամ փոփոխում են խոսքային գործունեությունը, բաժանում և ուղղորդում են զրույցի ընթացքը, նշանակելով որոշակի պատկերացումներ, ինչպես նաև ակնկալվող պատասխաններ:

Ելնելով այն դրույթից, որ «լեզուն որպես ամբողջություն» արտացոլում է իրականությունը և դիտելով նախադասությամբ որպես կառույց, կարելի է ասել, որ վերջինս ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլ նաև նրա գործուն բաղադրամասն է: Դա կարելի է փորձել պարզաբանել հետևյալ սխեմայով: Ցանկացած A իրադրություն առաջ է բերում Sh A՝ խոսքային գործողությունը: Sh A՝-ում պահպանված է նրան նախորդող իրադրությունը: Նախադասությունը իր «ներքին» իրական արժեքով դիտելով A իրադրության նկատմամբ արտաքին իրողություն է: Սյուս կողմից հենց այդ դեպքում եղանակավորող բառերի առկայությունը անխուսափելի է դարձնում արտաքին իրադրությանն անդրադառնալը: Եղանակավորող բառերի վերլուծության խնդիրները այսպիսով մատնանշում են նախադասության արհեստական մեկուսացումը ընդհանուր գործողությունից, որի մասն է նա կազմում: Նախադասությունը նույնպես կառուցում է իրականություն և մասն է կազմում նշանների անվերջանալի շղթայի՝ նա ոչ միայն նշանակիչ է, այլև նշանակալ: Այսպիսով սերտ կապ գոյություն ունի նախադասության որպես նշանի և նրա գործառույթի միջև²:

Ելնելով խոսքային իրադրության բաղադրամասերի (հաղորդող, ընդունող, հաղորդվող) և Բյուլերի «գործիքային կաղապարից» կառուցվածքային լեզվաբանությունը շեշտը դնում է նախադասության հաղորդակցական գործառույթի վրա: Այսպիսով նախադասությունը բաժանվում է ոչ թե ըստ իր ձևական կառուցվածքի, այսինքն ըստ ենթակա-ստորոգյալ առկայության, այլ ըստ իր տեղեկության ին կառուցվածքի³:

Ըստ Բյուլերի լեզվի կամ նշանների ընդհանուր կաղապարի տարբերակվում են 3 նշանաստեղծ գործոններ:

² Ochler, K., Über Grenzen der Interpretation aus der Sicht des semiotischen Pragmatismus, in: J. Simon, Zeichen und Interpretation, Ffm 1994, S.57-72.

³ Helbig, G., Geschichte der neueren Sprachwissenschaft, Leipzig, 1973, 59.

ա) Լեզվական նշանը հայտանիշ (Symptom) է այնքանով, որ նա հաղորդողի ներքինը, զգացումներն է արտահայտում (լեզվի արտահայտման գործառնությ),

բ) այն ազդանշան (Signal) է այնքանով, որ հաղորդողը դիմում է լսողին նպատակ ունենալով նրա մոտ հակազդում առաջ բերել (լեզվի հաղորդման գործառնությ),

գ) Լեզուն խորհրդանիշ (Symbol) է այնքանով, որ նա վերաբերում է իրականության առարկաներին և իրավիճակներին (լեզվի նկարագրող գործառնությ):

Այս կադապարով եղանակավորող բառերը կարող են ուսումնասիրվել որպես կապող անդամ A իրադրության և Sh A՝ խոսքային իրադրության միջև: Բյուլերի կողմից նկարագրված լեզվի երեք գործառնությունները մատնանշում են ոչ միայն խոսողի և լսողի միջև կապը, այլև կապը նախադասության և նրան նախորդող իրադրության միջև:

Վերցնենք հետևյալ հայտնի օրինակը գործաբանությունից: Տերը մատած է բազկաթռին և ասում է «Es zieht ja mächtig!», որից հետո ծառան փակում է պատուհանը: Ծառայի գործողությունը հետևում է A իրադրությանը: Գործողության այդ ընթացքում կարևոր են մի քանի գործոններ: Այդ հերթագայությունը մատնանշում է իրեն ներհատուկ ստորակարգություն իրադրության (S) և գործողության (H) հարաբերության միջև, որտեղ որպես ոչ խոսքային իրողություն առկա է Sh A՝ ն: Եթե ծառայի գործողությունը ուղեկցվի «Ja, ja, ich mache ja schon» նախադասությամբ, ապա ja, ja և schon եղանակավորող բառերը ցույց կտան ծառայի որոշակի վերաբերմունքը իր գործի հանդեպ: Ընդ որում հետաքրքիր է, թե արդյոք այդ ja, ja –ն ուշադրության, դժկամության թե համաձայնության արտահայտություն է, ինչը կարելի կլիներ որոշել օրինակ հնչերանգից⁴:

Ըստ Բյուլերի ja միևնույն նշանը իր ազդանշանային գործառնությով խոսողի և լսողի համար գտնվում է տարբեր նշանակություն ունեցող համատեքստերում: Ընդ որում այդ նշանը մատնանշում է ներքին /զգայական/ դիրքորոշումը գործողության համատեքստի նկատմամբ: Միաժամանակ աչքի է զարնում «ja, ja» ազդանշանի բազմիմաստությունը: Ուս պարզ է դառնում

⁴ Linke A./ Nussbauer M., Studienbuch Linguistik, RG1., Tübingen 1996, 275.

խոսողի և լսողի միմյանց նկատմամբ անհամամասնական դիրքով: Տերն իր ծառայի նկատմամբ գտնվում է վերադաս դիրքում: Այդ առանձնահատուկ իրադրության մեջ վերջինիս համար «Es zieht ja mächtig!» նախադասությունը նշանակում է գործողություն կատարելու պատուհանը փակելու անհրաժեշտություն, իսկ «ja mächtig»-ը սաստկացնում է «ziehen» բայի գործառույթը և մատնանշում այն հոգեվիճակը, որին օգնություն է անհրաժեշտ:

Sh A խոսքային գործունեությունը որպես կանոն հազիվ թե հանդիպի իրականության մեջ, սակայն բերված օրինակը ցույց է տալիս, որ այստեղ «ja»-ն բնութագրվում է որպես տիրոջ բազմանշանակ ասույթի գործողության համեմատաբար միանշանակ հետևանք: Քանի որ տիրոջ և ծառայի հարաբերության մեջ առաջինը կարող է ասել բազմանշանակ, համարժեք նախադասություն, մինչդեռ ծառան այն պետք է մեկնաբանի միանշանակ և խոսքային իրադրությանը համապատասխան: Եղանակավորող բառն այստեղ հանդես է գալիս որպես համապատասխան ծածկագիր և ստանձնում է որոշակի գործառույթ: Մի կողմից նա արտահայտում է ոչ ճշգրտություն, անորոշություն խոսքային գործունեության մեջ, մյուս կողմից կարող է ծառայել որպես պաշտպանություն հնարավոր ծայրահեղ մեկնաբանությունների դեպքում:

Այն, որ այս տեսությունը եղանակավորող բառերի ուսումնասիրության համար օգտակար կարող է լինել, բխում է օրինակ այն փաստից, որ զերմաներենը որպես օտար լեզու խոսողներին դժվարությամբ է հաջողվում եղանակավորող բառերը ճիշտ և տեղին օգտագործել, ինչը և պայմանավորված է եղանակավորող բառերի մշակութային արժեքով:

Այդ դեպքում կարևոր է ճշտել եղանակավորող բառերի տեղը նախադասության մեջ և գործողության ընդհանուր համատեքստում:

Գրականություն

Ohlschläger, G.: Untersuchungen zu den Modalpartikeln des Deutschen. Berlin, New York, 1985.

Helbig, G., Geschichte der neueren Sprachwissenschaft, Leipzig, 1973.

Oehler, K., Über Grenzen der Interpretation aus der Sicht des semiotischen Pragmatismus, in: J. Simon, Zeichen und Interpretation, Ffm 1994, S.57-72.

Weydt, H., Abtönungspartikel. Bad Homburg, Berlin, Zürich, 1969.

Linke A./ Nussbauer M., Studienbuch Linguistik, RGL. Tübingen 1996.